ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1028-Ա/2 «12» օգոստոս, 2020 թ.

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՐԳԸ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել՝
   1) գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգը՝ համաձայն հավելված N 1-ի,
   2) մրցութային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

Նախարար Արայիկ Հարությունյան

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«12» օգոստոսի 2020 թ.
N 1028-Ա/2 հրամանի

Կ Ա Ր Գ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի (այսուհետ՝ Կազմակերպություն) ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգը:

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), սույն կարգի պահանջներին համապատասխան, կազմակերպում է Կազմակերպությունների կողմից ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի/սարքավորումների ձեռք բերման նպատակով ներկայացված հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

2. Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվում է Կոմիտեի պաշտոնական կայքում՝ Հայտեր ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետից առնվազն երեսուն օր առաջ:

3. Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում Հայտ՝ համաձայն սույն կարգի հավելվածի:

4. Համատեղ օգտագործման գիտական սարքի/սարքավորման ձեռք բերման համար Հայտ ներկայացնում է այն Կազմակերպությունը, որտեղ սարքը/սարքավորումը տեղակայվելու է (այսուհետ՝ Հայտատու Կազմակերպություն): Հայտատու Կազմակերպության Հայտին կից ներկայացվում է առնվազն մեկ շահագրգիռ Կազմակերպության հիմնավորումը՝ վերջինիս գիտական և գիտատեխնիկական գործունեության համար այդ սարքի/սարքավորման անհրաժեշտության մասին:

5. Համաֆինանսավորող կողմ կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետության այն կազմակերպությունը (իրավաբանական անձը), որը

համաֆինանսավորումը կկատարի Հայաստանի Հանրապետության արտաբյուջետային միջոցներից: Համաֆինանսավորող կողմ կարող է հանդիսանալ նաև օտարերկրյա կազմակերպությունը:

6. Հայտերը գնահատելու համար ստեղծվում է մրցութային (գնահատող) հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), հաստատվում է Հանձնաժողովի աշխատակարգը:

7. Հայտն անհրաժեշտության դեպքում վերադարձվում է լրամշակման, ապա տրամադրվում Հանձնաժողովին՝ գնահատման:

8. Հանձնաժողովը գնահատում է Կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար սարքի/սարքավորման անհրաժեշտությունը, համատեղ օգտագործման մեխանիզմները, շահագործման ծախսերը և դրանց ծախսածածկման հնարավորությունները, շահագրգիռ կազմակերպությունների քանակը, մասնակցության աստիճանը և ծավալը, օրացույցային պլանը և առաջիկա 3 տարիների համար արդյունքների քանակական և որակական ցուցանիշները, արտաբյուջետային միջոցների հաշվին համաֆինանսավորման մասնաբաժինը և Կազմակերպությունում սարքի/սարքավորման հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետների առկայությունը:

9. Հանձնաժողովը, գնահատման արդյունքների հիման վրա, տալիս է սարքի/սարքավորման ձեռք բերմանն աջակցություն տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն: Հայտերի գնահատականների նվազման կարգով ձևավորում է վարկանիշային ցանկ:

10. Հավասար միավորների դեպքում նախապատվություն տրվում է այն Հայտին, որում շահագրգիռ կազմակերպությունների թիվը, ինչպես նաև համաֆինանսավորման մասնաբաժինն ավելի մեծ է, իսկ վերջիններիս հավասարության դեպքում՝ Հանձնաժողովը կազմակերպում է այց Հայտատու Կազմակերպություն՝ տեղում ծանոթանում դրա նյութատեխնիկական բազայի վիճակին և համապատասխան մասնագետների առկայությանը, ապա տալիս է համապատասխան եզրակացություն:

11. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը, ելնելով տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար նախատեսված հատկացումների չափից, հաստատում է Մրցույթի արդյունքները:

12. Ֆինանսական աջակցության երաշխավորված սարքի ձեռք բերման համար Հայտատու Կազմակերպությունը Կոմիտեի հետ կնքում է գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման պայմանագիր:

13. Հայտատու Կազմակերպությունը մշակում է ֆինանսական աջակցության երաշխավորված սարքը համատեղ օգտագործելու ընթացակարգ(եր), սարքի տեխնիկական բնութագիրը և կիրառման հնարավորությունների մասին տեղեկությունը հրապարակում է Կազմակերպության պաշտոնական կայքում:

14. Գիտական սարքի ձեռք բերումից 12, այնուհետև 24 ամիս հետո Հայտատու Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում ընթացիկ (տարեկան), իսկ 36 ամիս հետո՝ ամփոփիչ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն):

15. Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ սարքի շահագործմանը մասնակցած Կազմակերպությունների և խմբերի, ինչպես նաև իրականացված աշխատանքների ծավալի, բնույթի, ստացված արդյունքների (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն, մտավոր սեփականության տնօրինում և այլն) վերաբերյալ:

16. Հաշվետվությունների հիման վրա Հանձնաժողովը տալիս է եզրակացություն:

17. Հաշվետվություն չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Հանձնաժողովի բացասական եզրակացության դեպքում, Կոմիտեն քննարկում է սարքի/սարքավորման տեղակայման վայրի փոփոխության հարցը:

Հավելված
Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական
բազայի արդիականացման համար ֆինանսական
աջակցության տրամադրման կարգի

Հ Ա Յ Տ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 20.. թ. Ծածկագիր՝ _____

(*լրացվում է ՀՀ գիտության կոմիտեում*)

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտատու կազմակերպության

- լրիվ և կրճատ անվանում
- հասցե
- հեռախոս
- էլեկտրոնային փոստի հասցե
- ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)

2. Սարքի/սարքավորման

- անվանում
- գիտության բնագավառ(ներ)
- գինը

3. ՀՀ գիտության կոմիտեից հայցվող ֆինանսավորման չափ (հազար դրամ)

4. Համաֆինասավորող Կազմակերպության[1]

- լրիվ և կրճատ անվանում
- հասցե
- հեռախոս
- էլեկտրոնային փոստի հասցե
- ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)
- համաֆինանսավորման չափ (հազար դրամ)

5. Շահագրգիռ կազմակերպության[2]

- լրիվ և կրճատ անվանում
- հասցե

---

[1] *Լրացվում է, եթե կա համաֆինանսավորող*

[2] *Լրացվում է յուրաքանչյուր շահագրգիռ կազմակերպության համար առանձին*

- հեռախոս
- էլեկտրոնային փոստի հասցե
- ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)

Հայտատու կազմակերպության ղեկավարի ստորագրություն _____

Կ.Տ

Համաֆինանսավորող կազմակերպության ղեկավարի ստորագրություն _____

Կ.Տ

Շահագրգիռ կազմակերպության ղեկավարի ստորագրություն _____

«____» _____ 2020 թ.

ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ[3]

Շահագրգիռ կազմակերպության ղեկավար _____ _____

(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

«____» _____ 2020 թ.

[3] *Լրացվում է յուրաքանչյուր շահագրգիռ կազմակերպության համար առանձին*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՓՈՐՁ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ներգրավված մասնագետներ				
ազգանունը, անունը, հայրանունը	պաշտոնը	գիտական աստիճանը	աշխատանքային փորձը	
			ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը / վերապատրաստող կազմակերպությունը (գործունեության ոլորտը)
1	*2*	*3*	*4*	*5*

ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Սարքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ[4]

1. Սարքի/սարքավորման անհրաժեշտությունը կազմակերպության/կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության համար

2. Սարքի համատեղ օգտագործման մեխանիզմները

3. Սարքի շահագործման համար անհրաժեշտ ծախսերը և դրանց ծախսածածկման հնարավորությունները

4. Եկամտաբերության հնարավորությունները

5. Շահագրգիռ և համաֆինանսավորող կազմակերպությունների մասնակցության հիմնավորումը և համաֆինանսավորման ծավալները

6. Նմանատիպ սարք(եր)ի առկայությունը ՀՀ-ում

7. Կազմակերպության հագեցվածության աստիճանը տվյալ բնագավառ(ներ)ի այլ սարքավորումներով

8. Տարեկան օրացուցային պլան (3 տարիների համար)

9. Սարքի հետ աշխատող կամ վերապատրաստված մասնագետների ունեցած ձեռքբերումները

10. Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները *(հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))*

11. Ռիսկեր և հնարավորություններ *(ի՞նչ հնարավորություններ կստեղծվեն և ի՞նչ ռիսկեր կան)*

12. Այլ նշումներ

(«Հիմնավորում» բաժինը լրացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. հունիսի 16-ի N 958-Ա/2 հրամանով)

---

[4] *Մինչև 8 էջ*

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«12» օգոստոս 2020 թ.
N 1028-Ա/2 հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի (այսուհետ՝ Կազմակերպություն) ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի հայտերի (այսուհետ՝ Հայտ) գնահատումը, ինչպես նաև սարքի շահագործմամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություն) ընդունումն իրականացնում է մրցութային (գնահատող) հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

1) Հայտերի գնահատումը.

2) Հայտերի գնահատականների նվազման կարգով վարկանիշային ցանկի կազմումը.

3) Հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն տալը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:

6. Հանձնաժողովի անդամները գնահատում են Հայտը՝ լրացնելով գնահատման թերթիկը (սույն աշխատակարգի հավելված): Գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով:

7. Հանձնաժողովը կարող է ներկայացնել առաջարկ՝ Հայտերի քննարկման առաջնահերթության վերաբերյալ:

8. Հանձնաժողովը կազմում է Հայտերի գնահատականների նվազման կարգով վարկանիշային ցանկ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր Հայտի գնահատականների միջին թվաբանականի արժեքը և առաջնահերթությունները:

9. Հանձնաժողովը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

10. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների կողմից:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

11. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է Հանձնաժողովի նիստերը.

2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

12. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստին.

2) լրացնում է գնահատման թերթիկը.

3) մասնակցում է Հաշվետվության քննարկմանը.

4) ստորագրում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

13. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) Հանձնաժողովի անդամ չէ.

2) պատասխանատու է Հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար.

3) նախապատրաստում է Հայտերի գնահատման թերթիկները.

4) Հայտերը, Հաշվետվությունները տրամադրում է Հանձնաժողովի անդամներին.

5) կազմում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.

6) ապահովում է Հանձնաժողովի տնօրինության ներքո գտնվող փաստաթղթերի պահպանումը և սահմանված կարգով արխիվացման նպատակով այդ փաստաթղթերի հանձնումը Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ

Հայտի ծածկագիր _____

Չափանիշի անվանում	**Չափանիշի նկարագրություն**[5]	**Գնահատական**	
1. Անհրաժեշտություն	**Գիտական սարքի/սարքավորման անհրաժեշտության հիմնավորում**		
գերազանց	սարքի/սարքավորման անհրաժեշտությունը լիարժեք հիմնավորված է, թերություններն աննշան են	5.0	
		4.5	
շատ լավ	սարքի/սարքավորման անհրաժեշտությունը հիմնավորված է լավ, որոշակի վերապահումներով	4.0	
		3.5	
լավ	սարքի/սարքավորման անհրաժեշտությունը ընդհանուր առմամբ հիմնավորված է, կան որոշակի անհամապատասխանություններ, որոնք շտկելի են	3.0	
		2.5	
		2.0	
միջին	սարքի/սարքավորման անհրաժեշտությունը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	սարքի/սարքավորման անհրաժեշտության հիմնավորումը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով	0	
Մեկնաբանություն			
2. Հագեցվածության աստիճանը	**Կազմակերպության հագեցվածության աստիճանը տվյալ բնագավառ(ներ)ի այլ սարքերով և սարքավորումներով**	**Գնահատական**	
գերազանց	հագեցվածությունը համեմատաբար լիարժեք է, կարող է դառնալ տվյալ բնագավառի կոլեկտիվ օգտագործման կենտրոն	5.0	
		4.5	
շատ լավ	հագեցվածությունը համեմատաբար լավ է, որոշակի համալրումներով կարող է դառնալ տվյալ բնագավառի կոլեկտիվ օգտագործման կենտրոն	4.0	
		3.5	
լավ	հագեցվածություն ընդհանուր առմամբ կա, կան որոշակի հեռանկարներ	3.0	
		2.5	
		2.0	
միջին	հագեցվածությունը թույլ է և խիստ անորոշ է հեռանկարը	1.5	
		1.0	
		0.5	
վատ	տվյալ բնագավառի այլ սարքեր և սարքավորումներ բացակայում են կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով	0	
Մեկնաբանություն			

[5] Չափանիշի նկարագրությունն ուղղորդիչ է, եթե փորձագետը մեկնաբանություն բաժնում չի ավելացրել գնահատականը հիմնավորող համապատասխան նշում

3. Համատեղ օգտագործման առաջարկություն	**Գիտական սարքի/սարքավորման համատեղ օգտագործման առաջարկություն**		
գերազանց	առաջարկվում է 4 և ավելի շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ օգտագործման համար	3.0	
շատ լավ	առաջարկվում է 3 շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ օգտագործման համար	2.0	
լավ	առաջարկվում է 2 շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ օգտագործման համար	1.0	
միջին	առաջարկվում է 1 շահագրգիռ կազմակերպության հետ համատեղ օգտագործման համար	0	
Մեկնաբանություն			
4. Մասնագիտացում	**Սարքի հետ աշխատող կամ վերապատրաստված մասնագետների ունեցած ձեռքբերումները**		
գերազանց	մասնագետները լիովին բավարարում են սարքի հետ աշխատելու պահանջներին	5.0	
		4.5	
լավ	մասնագետները մասամբ են բավարարում սարքի հետ աշխատելու պահանջներին, սակայն կա վերապատրաստման պոտենցիալ	3.0	
		2.5	
		2.0	
միջին	բավարար ներկայացված չէ՝ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված է մակերեսորեն և անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	տեղեկությունը բացակայում է	0	
Մեկնաբանություն			
5. Համաֆինանսավորող կողմ(եր)ի առկայություն	**Համաֆինանսավորման մասնաբաժինը**		
գերազանց	ընդհանուրի 30%-ից ավելի է	3.0	
լավ	ընդհանուրի 15% - 30%-ն է	2.0	
միջին	ընդհանուրի 15%-ից պակաս է	1.0	
վատ	համաֆինանսավորում չկա	0	
Մեկնաբանություն			
6. Շահագրգիռ կազմակերպության համաֆինանսավորում	**Շահագրգիռ կազմակերպության / կազմակերպությունների համաֆինանսավորման մասնաբաժինը**		
գերազանց	ընդհանուրի 15%-ից ավելի է	3.0	
լավ	ընդհանուրի 5% - 15%-ն է	2.0	
միջին	ընդհանուրի 5%-ից պակաս է	1.0	
վատ	համաֆինանսավորում չկա	0	
Մեկնաբանություն			
7. Համատեղ օգտագործում	**Սարքի համատեղ օգտագործման մեխանիզմները, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցության աստիճանը**		
գերազանց	առաջադրված պահանջները լիովին նկարագրված են, թերություններն աննշան են	5.0	
		4.5	
լավ	ընդհանուր առմամբ նկարագրված է, թեև կան անհամապատասխանություններ, որոնք շտկելի են	3.0	
		2.5	
		2.0	
միջին	բավարար ներկայացված չէ՝ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված է մակերեսորեն և անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	հիմնավորումը բացակայում է	0	

Մեկնաբանություն			
8. Ակնկալվող արդյունքներ	**Տարեկան օրացուցային պլան, ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները**		
գերազանց	լիովին իրատեսական է, թերություններն աննշան են	5.0	
		4.5	
լավ	ընդհանուր առմամբ իրատեսական է, թեև կան անհամապատասխանություններ, որոնք շտկելի են	3.0	
		2.5	
		2.0	
միջին	բավարար ներկայացված չէ՝ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված է մակերեսորեն և անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	տեղեկությունը բացակայում է կամ ակնհայտ սխալ է	0	
Մեկնաբանություն			
9. Ծախսեր	***Սարքի շահագործման համար հնարավոր ծախսերը և դրանց ծախսածածկման հնարավորությունները***		
գերազանց	լիովին ներկայացված են շահագործման հնարավոր ծախսերը և ծախսածածկումները	3.0	
լավ	ընդհանուր առմամբ ներկայացված են շահագործման հնարավոր ծախսերը և ծախսածածկումները	2.0	
միջին	բավարար ներկայացված չէ՝ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված է մակերեսորեն և անորոշ	1.0	
վատ	հիմնավորումը բացակայում է կամ ակնհայտ սխալ է	0	
Մեկնաբանություն			
10. Եկամուտներ	***Հնարավոր եկամուտները***		
գերազանց	սարքն ունի եկամտաբերության մեծ հեռանկար	3.0	
լավ	սարքն ունի եկամտաբերության թույլ հեռանկար	2.0	
միջին	բավարար ներկայացված չէ՝ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված է մակերեսորեն և անորոշ	1.0	
վատ	սարքը եկամտաբերության հեռանկար չունի	0	
Մեկնաբանություն			
Ընդհանուր գնահատական (1-10) չափանիշների գնահատականների գումարը)			

Գնահատող՝ _____ _____

(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

«____» _____ 20.. թ.

(Հայտի գնահատման թերթիկը լրացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թ. հունիսի 16-ի N 958-Ա/2 հրամանով)